— Ս. քահանայ Տ. Յովսէփեանցին, որին լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ Թ. 1522.

— Քարահունջի քահանայ Տ. Սահակին կամիլաւկայի համար։ 1575.

— Գօրիսի Տ. Խորէն քահանային, կամիլաւկայի համար։ Թ. 1576.

— Սուաւրապօլի Կարապետ քահանայ Եագոյեանին, լանջախաչի համար։ Թ. 1642.

— Արմէն գիւղի Մարտիրոս քահանայ Տ. Նահապետեանին, լանջախաչի համար։ Թ. 1643.

— Ս. Խաչ քաղաքի Գէորգ քահանայ Տ. Մելքիսեդեանին, լանջախաչի համար։ Թ. 1645.

— Ամերիկայի Առաջնորդ, Տ. Յովսէփ արքեպիսկոպոսին, մի մատանի շնորհելու մասին։ Թ. 1646.

— Խլաթաղի Գրիգոր քահանայ Տ. Մինասեանին, կամիլաւկայի համար։ Թ. 1698.

ԿԱԼՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սեպտեմբերի 4-ին Սինոդը լուծեց Տփխիսեցի Աննա Յարութիւնեանի պսակը Սարգիս Գրիգորեանի հետ, և թոյլ տուեց մարդուն նորից ամուսնանալ։

Սեպտեմբ. 6-ին Սինոդը Գէորգ Տ. Գաբրիէլեանին ձեռնադրութեան հրաման տուեց Ղզլչախչախ գիւղի վերայ։

Սեպտեմբ. 11-ին Սինոդը պատուիրեց բոլոր Կոնսիստորիաներին ամեն տարի ներկայացնելու օրթոդոքս դաւանութիւնից Հայաստանեայց եկեղեցու ծոցը մտնողների ցուցակը։

Նոյն թուին Սինոդը պատուիրեց Վրաստանի Կոնսիստորիային, որ ամուսնացողն եթէ պատկանում է օրթոդոքս դաւանութեան, նախ պէտք է ընդունէ հայոց դաւանութիւնը և ապա պսակուի նոյն ծիսի համաձայն։

Սեպտ. 13-ին Սինոդը պատուիրեց Երևանի Կոնսիստորիային Ալէքսանդրապոլի Երուանդ քահ. Նալբանդեանին յանդիմանել, որովհետև առանց իւր հոգևոր իշխանութեան թոյլտուութեան հեռացել է երկար ժամանակով իւր պաշտօնատեղից։

Նոյն թուին Սինոդը որոշեց դիմել Ներքին գործոց Նախարարին միջնորդելու Թադաւոր Կայսեր առաջ, որպէս զի Վլադիկավկազի ս. Լուսաւորիչ եկեղեցու անունով հաստատէ Ուսիանէ Գեանջումեանի նուիրած կալուածը։

Նոյն թուին Սինոդը Թադէոս վարդապետին արձակեց ս. Եղիշէ Առաքելոց վանահայրութիւնից և նշանակեց Սևանայ միաբան, վանքի համար ուրիշ վանահայր ընտրելը թողնելով Նորին Վեհափառութեան։

Սեպտ. 15. Սինոդը կարգադրեց Մկրտիչ քահ. Մինասեանին ուղարկել Ղրիմու ս. Խաչ վանքը ապաշխարութեան երեք ամիս ժամանակով քաղաքական յանցանքի համար։

Սեպտ. 20-ին Սինոդը հրամայեց Վրաստանի Կոնսիստորիային քահանայ ձեռնադրել Մեծ-Գեոնդարա գիւղի վրայ Յակովբ Անտոնեանցին։

Նոյն թուին Սինոդը Պօղոս սարկ. Զուբարեանին արձակեց հոգևոր կոչումից նրա խնդրի համաձայն։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Երևանայ Կոնսիստորիային Ստեփան Պօղոսեանին ձեռնադրել Ներքին Ղանլիճա գիւղի վրայ քահանայ։

Նոյն թուին Սինոդը Վրաստանի Կոնսիստորիայի միջոցով Եղոր Գիշեանցին թոյլ տուեց կրկին ամուսնանալու, կնոջ երեք ամիս ապաշխարանքի ենթարկելով։

Սեպտ. 22-ին Սինոդը շրջաբերականով հրամայեց բոլոր կոնսիստորիաներին մկրտել հայոց եկեղեցու ծիսի համաձայն օրթոդոքս ամուսիններից ծնուած մանուկներին ծնողների համաձայնութեամբ։

Նոյն թուին Սինոդը լսեց Ստեփաննոս վարդապետ Շիրակունու յայտարարութիւնը, թէ ժողովուրդը հեռացրել է իրան Ղօշավանքից և քննութիւն նշանակեց։

Սեպտ. 25-ին Սինոդը ուղարկեց Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակի պատճէնը բոլոր կոնսիստորիաներին այրի քահանաների երկրորդ ամուսնութեան առթիւ և պատուիրեց ժողով գումարել քննելու կոնդակի իմաստն և հետևանքը ներկայացնելու Սինոդին։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուեց 52 տարեկան Համբարձում Տամթոյեանին ամուսնանալու 23 տարեկան Եղիսաբէթ Խիրու

Նոյն թուին Սինոդը բագուաբնակ Նիկողայոս Թոխաթելեանին կրկին ամուսնանալու իրաւունք տուեց, որովհետև նրա կինը ուրիշի հետ է կենակցում Աստրախանում։

Նոյն թուին Սինոդը Աւետիս քահանայ Տ. Մկրտչեանին իրաւունք տուեց Սուխումում քահանայութիւն անելու։

Նոյն թուին Սինոդը Բարվանսարայ գիւղացի Յովհաննէս Բլբուլեանցին կրկին ամուսնանալու իրաւունք տուեց նրա կնոջ անբարոյականութեան պատճառով։

Հոկտեմբերի 4-ին Սինոդը պատուիրեց Երևանի Կոնսիստորիային պահանջել Վահան քահ. Մամիկոնեանից նրա փոխարինաբար վերցրած 297 ռուբլի պարտքը՝ և զգուշացրեց կոնսիստորիային այդպիսի դէպք չկրկնելու։

Նոյն թուին Սինոդն որոշեց Սիօն վարդապետին իւր գործակից մի քահանայի հետ մարմնաւոր դատի յանձնել Նոր Բայազէտում գործակալութեան ժամանակ կատարած գառն զեղծումների համար։

Նոյն թուին Սինոդն թոյլ տուեց Հռիփսիմէ Մալխասեանին կրկին ամուսնանալու, որովհետև ամուսինը տասնամեայ տաժանակիր աշխատանքի է դատապարտուած։

Նոյն թուին Սինոդը որոշեց ի կատար ածել Եագոր Յակովբեանցի կտակը, ըստ որում նրա շարժական և անշարժ գոյքերը վաճառելուց և պարտքը տալուց յետոյ մնացած դրամի 4% պատկանում է ճեմարանին, իսկ 10% Վեհափառի տրամադրութեան տակ է դրուում գաղթականներին բաժանելու։

Նոյն թուին ձեռնադրութեան հրաման տուաւ Ղարամանք գիւղացի Գէորգ Յարոյեանին Ենիկա գիւղի վրայ։

Հոկտ. 6-ին Սինոդը պատասխանեց Երևանի Նահանգապետի հարցապնդումին վանական տուրքերի դժուարութեամբ ժողովելու մասին, յայտնելով որ մերժուած է վաղարշապատցիների խնդիրը պարտքերի մի մասը անպահանջ թողնելու։

Հոկտ. 7-ին Սինոդը քննելով Թէոդոսիա քաղաքի Ներսէս քահանայ Հերթեցեանի և նոյն քաղաքի ծխականների մէջ ծագած խռովութիւնները՝ վճռեց ենթարկել Ներսէս քահ. Հերթեցեանին եռամսեայ ապաշխարութեան Սեւանի վանքում իւր կատարած անվայել և ապօրինի գործերի համար ընդ միշտ հեռացնելով Թէոդոսիայից։ Նոյնպէս և յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան իւրացրած 892 ռուբլու համար, որից 400 ռուբլին պատկանում է Մայր Աթոռին, 200 ռ. Եալթայի ժողովրդեան 192 ռ. կարմիր խաչի ընկերութեան և 100 Լուգանսկի ժողովրդի դանդակի դումար։

Հոկտ. 9-ին Սինոդը որոշեց ի կատար ածել Տփխիսաբնակ Բաղդասար Աբովեանի կտակը, որից 30000 ռուբլին նրա կին Նունեայի մահից յետոյ համարում Գէորգեան ճեմարանի սեպհականութիւն. այդ փողի տոկոսով յիշեալ ճեմարանի սաներ պէտք է բարձրագոյն կրթութեան գնան։

Նոյն թուին Սինոդը պատուիրեց Վրաստանի Կոնսիստորիային մարմնաւոր իշխանութեան յանձնելու Վահան վ. Գէորգեանին Զարեքայ վանքի անտառից ինքնադլուխ փայտ վաճառելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց Սարգիս քահանայ Իշխանեանին յանձնել մարմնաւոր իշխանութեան տասնամեայ Շահդան Սադրեանին 23 ամեայ Շահվալադ Հայրապետեանցի հետ պսակելու համար։

Նոյն թուին Սինոդը մերժեց Ալէքսանդրապոլի ս. Փրկիչ եկեղեցու ծխականների խնդիրը Մկրտիչ Կարապետեանին սարկաւագութեան աստիճան տալու նրա տգիտութեան պատճառով։

Հոկտ. 11-ին Սինոդը յանձնեց մարմնաւոր իշխանութեան Մկրտիչ քահ. Տ. Գաբրիէլեանցին, Արշակ քահ. Տ. Թովմասեանցին և Պօղոս քահ. Տ. Թովմասեանցին ապօրինի պսակ կատարելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց յանդիմանել Աշոտ եպիսկոպոսին 19 ամեայ Գարեգին Տ. Կարապետեանին սարկաւագ ձեռնադրելու այլ և պաշտօնական գրութեանց մէջ անպատշաճ բառեր գործածելու համար։

Նոյն թուին Սինոդը պատուիրեց Վրաստանի Կոնսիստորիային Սոկրատ Մելիք-Ադամեանի այրեոյն վարձատալ ամուսնու կատարած փաստաբանութեան համար։

Հոկտ. 13-ին Սինոդը պատասխանեց Երևանի արական գիմնազիայի տեսչին հայկական-եկեղեցական տօնների վերաբերմամբ, որ յիշեալ գիմնազիայի հայ աշակերտները տօնելու են Աստուածածնի աւետումն, ս. Գրիգոր Լուսաւորչի մուտն ի Վիրապն. ս. թարգմանչաց ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների, ս. Ղևոնդեանց, Վարդանանց և Վեհափառ Կաթուղիկոսի անուանակոչութեան տօները։

Հոկտ. 16-ին Սինոդը խնդրեց Վեհափառի հաճութիւնը Յովել վարդապետին Ղոշավանքի վանահայր նշանակելու։

Հոկտ. 18-ին Սինոդը լսեց Սևանայ վանահօր յայտարարութիւնը, թէ այդ վանքի գիւղերը հրաժարուում են իրանց հասանելիք տուրքը տալուց և կարգադրեց խստիւ պահանջել։

Հոկտ. 20 Երեմիա վարդապետը նշանակուեց Մայր Աթոռի տպարանի պատասխանատու անձը։

Հոկտ. 25-ին Սինոդը մերժեց Ղարաբաղի թեմի Դոլանլար գիւղի երկու ապօրինի կենակցողների խնդիրը պսակուել, գտնուելով ազգակցութեան չորրորդ աստիճանում։

Նոյն թուին Սինոդը Հատրուտ գիւղացի Առաքել Աբալեանցին կրկին ամուսնանալու իրաւունք տուեց նրա կին Մարիամի զեղխութեան պատճառով։

Հոկտ. 27-ին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղու Կոն-

սիստորիային երեք հոգաբարձու նշանակել Գանձասարի վանքի բարեշինութեան համար՝ տալով հարկաւոր ծախսը։

Հոկտ. 30-ին Սինոդը պետական դումայի ներկայացուցիչների ընտրութեան համար իւր կողմից հարկաւոր կարգադրութիւններն արեց։

Նոյն թուին Սինոդը կրկին ամուսնանալու իրաւունք տուեց վլադիկավկազցի Մարիամ Պապիսեանին մարդու ապօրինի կենակցութեան պատճառով։ Գանձակեցի Առնմազեան ամուսինների համար նոյն կարգադրութիւնն արեց։

Նոյեմբերի 1-ին Սինոդը լսեց և Վեհափառ Կաթուղիկոսի տնօրէնութեան յանձնեց Սուքիաս արքեպիսկոպոսի անպատուութեան գործը։

Նո. 3-ին Սինոդը լսեց և Վեհափառ Կաթուղիկոսի տնօրէնութեան թողեց Վրթանէս Փափազեանի կնոջ գործը նրա պարսկահպատակ լինելու պատճառով։

Նոյ. 8-ին կրկին ամուսնանալու իրաւունք տուեց Տփխիսեցի Դարինկա Հէյրանեանին մարդու անառակ ընթացքի պատճառով։

Նոյ. 10 Սինոդը պատուիրեց Վրաստանի հայոց Կոնսիստորիային պահանջելու Հանգուցեալ Արտեմ Սարգսեանի կտակարարներից կտակուած գումարը Մայր Աթոռի, ու Սղնախ քաղաքի եկեղեցու օգտին։

Նոյն թուին Սինոդը նոյն Կոնսիստորիայի միջնորդութեամբ լուծեց Մուրադեանց ամուսինների պսակը, թոյլ տալով մարդուն կրկին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը մերժեց Երևանու Կոնսիստորիայի միջնորդութիւնը Նազարէթ Մխիթարեանցին քահ. ձեռնադրելու Շիրվանջուղիգիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուեց Ախալցխացի Մխակ Գրիգորեանին կրկին ամուսնանալու կնոջ Մարիամ Յակոբեանի անհաւատարմութեան պատճառով։

Նոյ. 13-ին Սինոդը մերժեց Երևանի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Մատթէոս Տ. Իսահակեանի քահանայ ձեռնադրելու խնդիրը ընծայացուի անպատրաստութեան պատճառով։

Նոյն թուին Սինոդը խնդրեց Վեհափառից Ոանահնի վանահայր նշանակել Մայր Աթոռի միաբաններից մէկին, ազատ համարելով նոյն պաշտօնից Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանցին։

Նոյեմբ. 15-ին Սինոդը թոյլ տուեց պսակուելու Բերդ գիւղացի Սարգիս Սարգսեանին Մարգարիտ Ադամեանի հետ խնամիութեան չորրորդ աստիճանում։

Նոյն թուին Սինոդը որոշեց Նորին Սրբութեան ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ Մայր Աթոռի միաբաններից շատերը հրաժարուում են Սինոդի յանձնարարութիւնները կատարելուց։

Նոյն թուին Սինոդը որոշեց պահանջել Մայր Աթոռի անունով Տփխիսեցի Ալէքսանդր Արամաքլիսեանցի կողմից կտակած հինգ հարիւր ռուբլին։

Նոյեմբ. 17-ին Սինոդը քահանայական ձեռնադրութեան հրաման տուեց Տփխիսեցի Կարապետ Տոնոյեանցին Վարդանոյ գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը պատուիրեց Վրաստանի Առաջնորդին ս. Սարգսի վանքի տնտեսականը կառավարելու համար ընտրել տալ եկեղեցական ծխական հոգաբարձութիւն՝ իւրաքանչիւր տարի ժանրամասն հաշիւ ներկայացնել Սինոդին և բաց անել վանքի գաւթում դպրոց. յատկացնելով ամբողջ եկամտի $^3/_4$-ը, իսկ $^1/_4$-ը ուղարկելով Սինոդին յօգուտ Մայր Աթոռի։

Նոյեմբ. 20-ին Սինոդը հրամայեց Գրիգոր Տէր Յարութիւնեանցին քահանայ ձեռնադրելու Երևանի Նահանգի Անգեղակոթ գիւղի վրայ։

Նոյեմբ. 29-ին Սինոդը պատուիրեց Վրաստանի Կոն-

սիստորիային ընդունել հանգուցեալ Աւետիս Ղուկասեանի կտակատարներից Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի համաձայն Ղուկասեանի կտակած 60000 ռուբլին և ներկայացնել Սինոդին, որպէս զի գործ դրուին կտակի համաձայն այդ գումարի տոկոսները։

Նոյն թուին Սինոդը լուծեց Աղջաղալա գիւղի Եղոյեան ամուսինների պսակը մարդու անընդունակութեան պատճառով, և թոյլ տուեց կնոջը նորից ամուսնանալու։

Դեկտեմբերի 1-ին Սինոդը լուծել է Հաջինազար գիւղացի Աղէք գաւառի Ջաւահիր Յարութիւնեանի պսակը թոյլ տալով նրան նորից ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը հրաման է տուել Վրաստանի Կոնսիստորիային քահանայ ձեռնադրել Սահակ Թիրաբեանցին Խաչտառակ գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը լուծել է Արմաւիր քաղաքացի Քերակեանի ամուսնալուծական գործը, թոյլ տալով նրան կրկին ամուսնանալ։

Դեկտ. 4-ին Սինոդը ուղարկել է Դեպարտամենտին Վրաստանի Կոնսիստորիայի նախկին ատենադպիր Յարութիւն Տ. Եսայեանի բողոքը կենսաթոշակի վերաբերեալ։

Նոյն թուին Սինոդը իւր անդամ բարձր. Տ. Յուսիկ վարդապետին լիազօրութիւն տալով ուղարկել է Բեսարաբիայի թեմի մութ հաշիւները զննելու, և արդիւնքը ներկայացնելու Սինոդին։

Դեկտ. 8-ին Սինոդը որոշել է քննութիւն նշանակել Խորէն վարդ. Լազարեանի գործերի վրայ Մողնու վանքում վանահայրութեան ժամանակ կատարած զեղծումների համար։

Նոյն թուին Սինոդը խնդրել է նախարարութիւնից, որ Բագուայ շրջանի գործակալութիւնը մոցուի այն հաստատութիւնների և անձինքների ցուցակի շարքը, որոնք ուղարկում են իրանց ծրարները փոստով ձրիաբար։

Նոյն թուին մերժեց Ղազանչեցի Սիրական Կարապետեանի գործը, որ ուզում էր քահանայ ձեռնադրուել։

Նոյն թուին թոյլ տուեց Արմաւիրցի Աբրահամ Ասլանեանցին կրկին ամուսնանալու, ինչպէս և Նոր Նախիջեւանցի Նունիա Ցարութիւնեանին։

Նոյն թուին Սինոդը Սանահնեցի Խալու Մուրադեանի բռնի ամուսնութեան համար դիմել է Տփխիսի շրջանային դատարանի դատախազին յանցաւորներին պատժի ենթարկելու համար։

Նոյն թուին Սինոդը պատուիրեց Բնսարաբիայի Կոնսիստորիային Հայկանուշ Ղազարեանցին կրկին ամուսնանալու իրաւունք տալ մարդուն զրկելով այդ իրաւունքից։

Դեկտ. 11-ին Սինոդը լսելով Շուշի քաղաքի Եղիշէ քահանայ Թարխանեանի քննութիւնը Տաթեւի փոխանորդ Ներսէս վարդ. Մելիք-Թանգեանի գործերի մասին, արդար ճանաչեց Ներսէս վարդապետին, համարելով նրա դէմ եղած բողոքներն ամբաստանութիւն և վճռեց պահանջել քննիչ Եղիշէ քահանայի ծախքերը ամբաստանողներից։

Նոյն թուին Սինոդը կարգեց յանձնաժողով Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակի համաձայն՝ կազմելու առաջիկայ 1907 թուի համար Մայր Աթոռի նախահաշիւը. յանձնաժողովի անդամներն են—Բաբգէն, Ներսէս, Կիւրեղ, Մեսրոպը, Մխիթար վարդապետները, որոնց պատուիրուեցաւ մինչև սոյն դեկտ. 25-ը ներկայացնել նախահաշիւը։

Դեկտ. 13-ին Սինոդը մերժեց Երևանի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Մատթէոս Տ. Իսահակեանին ձեռնադրելու քահանայ։

Դեկտ. 15-ին Սինոդը մերժեց Քեալագարիս գիւղացի Լևոն Դիլոյեանցի պսակալուծութեան գործը չգտնելով օրինական հիմք պսակը լուծելու։

Նոյն թուին Սինոդը հրաման է տուել Երևանայ Կոն-

սիստորիային Արմենակ Տ. Նիկողայոսեանին քահանայ ձեռնադրելու Թայչարուխ գիւղի վրայ։

Նոյն թուին Սինոդը լսելով Նախարարների յանձնաժողովի շրջաբերականը, որով արգելուում է պետական հիմնարկութիւններում ծառայողներին մասնակցել յեղափոխական շարժումներին, որոշեց յիշեալ շրջաբերականի պատճէնները ուղարկել բոլոր Կոնսիստորիաներին ի հրահանգութիւն։

Նոյն թուին Սինոդը մերժեց Բաշ գիւղացի (Կարսի շրջան) Գէորգ Տ. Մարտիրոսեանցի և Սուքիաս Ժամկոչեանցի քահանայ ձեռնադրելու խնդիրը, գիւղը բաղկացած է 150 տնից։

Նոյն թուին Սինոդը հրաման ուղարկեց Շամախու Կոնսիստորիային ընդունել Բագու քաղաքացի Վերա Գուսավկովային Հայաստանեայց եկեղեցու ծոցը։

Դեկտ. 18-ին Սինոդը նշանակեց վերաստուգիչ յանձնաժողով Ներսէս, Բաբգէն և Իսահակ վարդապետներից բաղկացած՝ ստուգելու Էջմիածնապատական գիւղերի ապառիկների և միւս հաստատութիւնների հինգ տարուայ հաշիւները։

Դեկտ. 22-ին Սինոդը լուծեց Սոփիա Վասիլիվնայի պսակը Վալեստին Տ. Մատթէոսեանի հետ կնոջ պոռնկութեան պատճառով և մարդուն իրաւունք տուեց ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուեց Երևանայ Կոնսիստորիային ձեռնադրել Գրիգոր Տ. Յարութիւնեանին քահանայ Անգեղաձոր գիւղի վրայ։